# Հետազոտական աշխատանք

Առարկա՝ Հայոց լեզու և գրականություն

Թեմա՝ Ուսուցման ժամանակակից մեթոդների կիրառումը հայոց լեզվի և գրականության դասերին

Կազմեց՝ Վ. Մելքոմյանը

Գեղանուշի միջնակարգ դպրոց

Ղեկավար՝ Լուսինե Գրիգորյան

Վերապատրաստող կազմակերպության անվանումը

Կապանի N2 ավագ դպրոց

# Բովանդակություն

1.Ներածություն----------2

2.Մեթոդների տեսակները----------3

3.Դասի տարբեր փուլերում կիրառվող մեթոդների մասին----------4

4.Ժամանակակից մեթոդների կիրառումը գրականության ուսուցման ժամանակ , դրանց արդյունավետությունը ----------6

5.Հետազոտության արդյունքները ----------14

6.Եզրակացություն----------15

7.Օգտագործված գրականություն----------15

8.Հավելված՝

1.Օրվա դասի պլան----------16

2.Օրվա դասի պլան----------17

# Ներածություն

Ուսուցման մեթոդների կիրառումը փոխներգործուն գործընթաց է ուսուցչի և աշակերտի միջև , ինչի արդյունքում տեղի է ունենում գիտելիքի, հմտությունների և կարողությունների փոխանցում և յուրացում՝ նախատեսված ուսումնառության բովանդակությամբ;

Մանկավարժության ուսուցման մեթոդները դասակարգվում են 3 խմբի՝

1. Բանավոր, տեսողական, գործնական
2. Վերարտադրողական, բացատրական, ցուցադրական,որոնողական, հետազոտական
3. Ինդուկտիվ և դեդուկտիվ

Կրթական- ճանաչողական գործունեության արդյունավետությանը միտված վերահսկման մեթոդներ. գիտելիքի, կարողությունների և հմտությունների տիրապետման արդյունավետությունը որոշող բանավոր, գրավոր ստուգումներ և ինքնքստուգումներ;

Կրթական- ճանաչողական գործունեությունը խթանող մեթոդներ. որոշակի խթաններ ուղղված մոտիվացիայի ձևավորմանը, պատասխանատվության զգացում ունենալուն, պարտականություններ կրելուն, շահագրգռվածությանը՝ ունենալու գիտելիք, հմտություններ և կարողություններ;

Դասակարգում ենք պասսիվ, ակտիվ և ինտերակտիվ մեթոդներ;

Պասիվ մեթոդ- սովորողի և դասավանդողի փոխադարձ գործունեության ձև, որտեղ դասավանդողը գլխավոր դերակատարն է և դասի ընթացքի ղեկավարը, իսկ սովորողներըպասիվ լսողի դերում ենև ենթարկվում են ուսուցչի հրահանգներին; Սովորողի և դասավանդողի կապըպասիվ ուսուցման տարբերակում պահպանվում է հարցումների, թեմատիկ աշխատանքների, թեստերի միջոցով;Պասիվ մեթոդը համարվում է արդյունավետ , քանի որ այն ուսուցչից պահանջում է թեթև նախապատրաստական աշխատանք դասին և տալիս է համեմատաբար մեծ ծավալով ուսումնական նյութի մատուցման հնարավորություն դասի սահմանափակ ժամանակահատվածում;

Ակտիվ մեթոդ- սովորողի և դասավանդողի փոխադարձ գործունեության ձև, որտեղ դասավանդողը և սովորողը փոխազդում են միմյանց վրա կրթական գործունեության ընթացքում, և սովորողներն այստեղ ոչ թե պասսիվ ունկնդիրներ են , այլ դասի ակտիվ մասնակիցներ; Եթե պսսիվ ուսուցման դեպքում գլխավոր դերակատարը և հիմնական հրահանգողը դասավանդողն է, ապա այստեղ սովորողն ու դասավանդողը հավասար իրավունքների դաշտում են;

Ինտերակտիվ մեթոդ- նշանակում է փոխներգործել , գտնվել ինչ-որ մեկի հետ երկխոսության մեջ; Ինտերակտիվ մեթոդների դեպքում սովորողները փոխադարձաբար ակտիվ

գործունեության մեջ են գտնվում նաև միմյանց հետ և ուսուցման պրոցեսում գերակայում է սովորողների դերը;Ինտերակտիվ ուսուցման պրոցեսում դասավանդողն առաջատար դերում չէ . նրա դերը կրթական գործունեությունը դեպի դասի նպատակի իրականացում ուղղորդելն է;

Ուսուցման մեթոդ հասկացությունն իր մեջ ներառում է երեք խնդիր՝ ինչ սովորեցնել, , ինչու սովորեցնել և ինչպես սովորեցնել;

Արդի տեղեկատվական հասարակության պայմաններում ժամանակակից սերունդ կրթելու համար անհրաժեշտ է յուրացնել և ներդնել ուսուցման նորարական տեխնոլոգիաներ և ուսուցման մեթոդներ; Յուրաքանչյուր դաս ենթադրում է ստեղծագործական լուրջ աշխատանք, որի արդյունքում ուսուցիչը գտնում և մշակում էայն ձևերն ու հնարները , որոնք տանում են դեպի դասինպատակների արդյունավետ իրականացում, Թերևս ամենակարևորը դասի նպատակը հստակ գիտակցելն է, չափորոշչային պահանջներին համապատասխանեցնելը, ուղիների մեթոդների ու հնարների ճիշտ ընտրելը, դասի մատուցումը և ժամանակի մեջ տեղավորվելը ;

Հանրակրթության պետական չափորոշիչը ելնում է կարողունակությունների վրա հիմնված մոտեցումից և սահմանում է շրջանավարտներին ներկայացվող որակական պահանջները;

Կարողունակությունը անհատի համալիր բնութագրիչ է, որը թույլ է տալիս հաջողությամբ լուծելու որոշակի խնդիրներ; Եթե որևէ մեկը հավակնում է կարողունակ լինել, ապա պետք է տիրապետի որոշակի գիտելիքների, լինի հմուտ, ունենա արժեքային համակարգ և կարողանա արտահայտել իր դիրքորոշումը;

ՀՀ կառավարության կողմից սահմանվել են 8 կարողունակություն.

1. Լեզվական գրագիտություն
2. Սովորել սովորելու կարողունակություն
3. Ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն
4. Ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակություն
5. Թվային և մեդիա կարողունակությունմշակութային կարողունակություն
6. Մշակութային կարողունակություն
7. Մաթեմատիկական և գիտատեխնիկական կարողունակություն
8. Տնտեսական կարողունակություն

Կարողունակությունները ձևավորվում են ուսուցման փոխներգործուն մեթոդների և տեխնոլոգիաների կիրառման արդյունքում;Կարողունակություններից չպետք է առանձնացնել խաչվող հասկացությունները, որոնք ընդհանրական են տարբեր գիտությունների համար և օգնում են սովորողներին միավորել տարբեր առարկաներից ձեռք բերած գիտելիքները՝ աշխարհի մասին

մեկ ամբողջական պատկերացման շրջանակներում;Խաչվող հասկացությունները պետք է ընտրվեն բոլոր առարկաներում և կիրառվեն իրական կյանքի հետ համադրման համատեքստում;

Առարկայական ծրագրերում ներառված են 12 առանցքային գաղափարներ.

1 Օրինաչափություն

2 Պատճառ և հետևանք

3 Մասշտաբ, համամասնություն, քանակ

4 Կառուցվածք և գործառույթ

5 Համակարգ և մոդել

6 Էներգիա, նյութ

7 Կայունություն և փոփոխություն

8 Զարգացում

9 Անհատ և հարաբերություններ

10 Ժամանակ և տարածություն

11 Անհատական և մշակութային արժեհամակարգ

12 Համաշխարհայնացում

Սակայն վերոնշյալ խաչվող հասկացություններից ոչ բոլորն են պարտադիր ուսումնական տվյալ առարկայի շրջանակում; Դրանք կարելի է կիրառել՝ ըստ թեմայի նպատակահարմարության; Դասը կարելի է բաժանել հետևյալ փուլերի. խթանում, իմաստի ընկալում և կշռադատում ԽԻԿ

## Դասի խթանման փուլի ակտիվ մեթոդներն են՝

.Մտագրոհ

. Պրիզմա

.Հարցեր

## Դասի իմաստի ընկալման փուլի ժամանակ կիրառելի մեթոդներ կարող են լինել՝

.Վենի Դիագրամա

. Աղյուսակների կազմում

. Հնգյակի մեթոդ

. Փաստերի բուրգ

. Խճանկար

Դասի կշռադատման փուլի ժամանակ նպատակահարմար է կիրառել հետևյալ մեթոդները՝

.Քառաբաժան աղյուսակ

. Գաղափարների քարտեզագրում

. Թեստեր

.Ելքի քարտ

Յուրաքանչյուր դաս կարելի է դիտարկել որպես ուսուցչի և աշակերտների ճանապարհորդություն, որը լի է անակնկալներով , ուսանելի և հետաքրքիր է բոլորի համար և միասին կրկին ճանապարհորդելու ցանկություն է առաջացնում; Իսկ ցանկացած ճանապարհորդություն ձեռնարկելիս անհրաժեշտ է նախ հասկանալ որտեղից է այն սկսվում, և որն է մեկնակետը; Այսպիսով , նախ պետք է հասկանալ , թե որտեղ ենք գտնվում; Դրա համար հարկավոր է հաշվի առնել.

1.դասարանի ընդհանուր բնութագիրը

2. նախնական գիտելիքի գնահատումը

3.ուսումնառական ոճերը

Հետազոտության համար սահմանել եմ հետևյալ նպատակները՝

1.Վերլուծել գրականության ուսուցման ժամանակ ժամանակակից մեթոդների կիրառման արդյունավերությունը

2.Խթանել աշակերտների ինքնուրույն որոնողական աշխատանքները

Շատ կարևոր է նախապես ձևակերպել նպատակները և նշել ակնկալվող արդյունքը; Իսկ այդ արդյունքին հասնելու համար պահանջվում է մեթոդների ճիշտ ընտրություն; Կան մի շարք գործոններ , որոնք ազդում են մեթոդների ընտրության վրա.

1. Ուսուցման նպատակները , խնդիրները, բովանդակությունը
2. ՈԻսուցման նյութի քանակը և բարդությունը
3. Սովորողների տարիքային և անհատական առանձնահատկությունները
4. Սովորողների պատրաստվածության մակարդակը
5. Ուսուցման կազմզկերպման պայմանները
6. Ոսուցչի պատրաստվածության մակարդակը

Վերը նշվածներից հետո արդեն կարելի է անցկացնել դասը;

# Վիլյամ Սարոյանի կենսագրության ուսուցումը 7-րդ դասարանում

Դասի նպատակը՝ ծանոթացնել Սարոյանի կյանքին և գործնեությանը

սովորեցնել ուշադիր լսել միմյանց

ձևավորել սեփական մտքերը մատչելիլեզվով և գեղեցիկ ներկայացնելու հմտություն

գրողի անձնական կյանքի օրինակով զարգացնել

առաքինության որակները

պատկերացում տալ գրողի ապրած ժամանակաշրջանի մասին

Խնդիրները՝ կենսագրական նյութի ընթերցում, հավաքագրում, համակարգում, ամփոփում

տեղեկությունների դուրս գրում

պլանի կազմում

Աստվածաշնչյան խոսքերի և Սարոյանի մտքերի համադրում, համեմատություն, ընդհանրացում

ստեղծագործական աշխատանք

Վերջնարդյունքները՝ ունենա պատկերացում Սարոյանի ապրած ժամանակաշրջանի մասին

կունենա տեղեկություն Սարոյանի կյանքի և գործնեության մասին

կթվարկի Սարոյանի ստեղծագործությունները

կարժևորի մարդկային բարձր արժանիքները

Խաչվող հասկացություններ՝ն համակարգ և մոդել

զարգացում

անհատ և հարաբերություններ

ժամանակ և տարածություն

արժեհամակարգ

Անհրաժեշտ նյութեր և պարագաներ՝ Վ. Սարոյանի դիմանկարը, նկարներ, Սարոյանի հատորները, դասագիրք, ասույթներ , Աստվածաշունչ, քարտեր

Հիմնական հասկացություններ՝ Վիլյամ Սարոյան

Բարություն

Մեթոդներ ՝ պրիզմա, ընթերցումներ, Վեննի դիագրամ, խմբային աշխատանք, հնգյակ, համառոտ զրույց– դասախոսություն, մտքի քարտեզ, հասկացությունների խմբավորում,Տաձև աղյուսակ;

Դասի կառուցվածքը՝ ԽԻԿ

Դասի ընթացքը. ա. Խթանման փուլ

Քայլ 1. Պրիզմայի մեթոդով բացահայտել<<ՀԱՅ >> և << Վիլյամ Սարոյան>> հասկացությունները՝ աշակերտներին մտովի տեղափոխել սփյուռք, գտնել Սարոյանի աշխարհը բացահայտող բանալի բառը՝ Բարություն;


ՀԱՅ
Հայաստան
տառապանք
Մասիս
Արաքս
արցունք
թուրք
գերություն
եղեռն
գաղթական
Վիլյամ Սարոյան
ֆրեզնո
հայ
օտարություն
սփյուռք
դուդուկ
Հայկ
բաժանում
որբություն
բիբլիսցի
կռունկ
ճանապարհ
նախահայր
պատմություն
մեղեդի
ծնողներ
անցյալ
կարոտ
հուշ
մանկություն
ծերություն
բարություն

## Քայլ 2. Կարդում ենք Սարոյանի մտքերը բարության մասին

1. <<Դա հասարակ ու հին է, ինչպես աշխարհը. ավելի լավ է լինել բարի, քան լինել չար>>;
2. <<Փնտրիր բարին ամենուրեք , և թո՝ղ նա լինի ազատ և աներկյուղ…Արթնացրու առաքինությունը>>;
3. <<Մի՝ ամաչեք լինել բարի ու քնքուշ>>;

Քայլ 3. Վեննի դիագրամի միջոցով կատարել բարության մասին խոսքերի ընդհանրացում; Աշակերտներին նախապես հանձնարարել Աստվածաշնչից դուրս գրել բարության մասին տողեր;

Առաջադրանք 1 կարդացեք թե ինչ տողեր եք դուրս գրել Աստվածաշնչից

2 կարդացեք Սարոյանի խոսքերը

3 կատարեք մտքերի ընդհանրացում



Բարի անունը շատ հարուստութենեն Ատեցեք չարությունն ու ստո
ստորությունը, բայց ոչ չար ու ս

Տոր մարդկանց

ավելի ընտիր է

Չար մարդոց մի՝ նախանձիր ու անոնց

հետ կենալու մի ցանկար

Բայց դուն բարի մարդոց ճամբան

Պիտի երթաս

## Իմաստի ընկալման փուլ

Քայլ 4 դասարանը բաժանել 3 խմբի

Քայլ 5 խմբերը կատարում են տարաբնույթ քարտային աշխատանքներ ՝ կենսագրական տեղեկությունները լիարժեք ընկալելու համար ;

I խումբը լրացնում է ժամանակագրական աղյուսակը՝ օգտվելով դասագրքից

II խումբը լրացնում է այբբենական աղյուսակը ՝ օգտվելով մդասագրքից

III խումբը կազմում է պլան

Աշխատանքների կատարման համար տրվում է 15 րոպե;

1. Ժամանակագրական աղյուսակ

| Տարեթվեր | Իրադարձություններ |
|---|---|
| 1908 | Ֆրեզնոյում ծնվել է Վ. Սարոյանը |
| 1934 | Լույս է տեսնում առաջին գիրքը |
| 1935 | Եղել է Երևանում |
| 1960 | Կրկին այցելել է Երևան |
| 1981 | Մայիսի 18-ին Ֆրեզնոյում մահացել է Վ. Սարոյանը |

Այբբենական աղյուսակ

| Տառեր | Անձնանուն | Երկի անվանում | Տեղանուն | Տերմին | այլ |
|---|---|---|---|---|---|
| Ա | Արմենակ | | ԱՄՆ, Արևմտյան Հայաստան | | Անգլերեն, ամերիկյան |
| Բ | | | Բիթլիս | | բանվոր |
| Գ | | | | | Գրասենյակային ծառայող |
| Ե | | | Երևան | | |
| Թ | Թագուհի | | | | |
| Լ | | | | | լրագրավաճառ |
| Խ | | Խիզախ պատանին… | | | |
| Կ | | | Կալիֆոռնիա, Կոմիտասի անվան պանթեոն | | |
| Հ | | | Հայաստան | | հեռագրատուն |
| Ս | Սարոյան | | | | |
| Վ | Վիլյամ | | | Վիպակ, վեպ | |
| Պ | | | | | |
| Ց | | | | | ցրիչ |
| Ֆ | | | Ֆրեզնո | | |

3 Պլան

1. Ով է Սարոյանը
2. Արմատները՝ ծնունդը
3. Որբ մանկություն օտար հողում
4. Աշխատանք ուսումի փոխարեն
5. Գրական փորձ է ճանաչում
6. Սարոյանը 1500-ից ավելի երկերի հեղինակ
7. Հերոսները
8. Ես հայ գրող եմ
9. Այցելություն երևան
10. Մահը; Կտակը

Քայլ 6.Խմբային աշխատանքից հետո աշակերտները ներկայացնում են իրենց աշխատանքները;

Քայլ 7.Համառոտ զրույց- դասախոսություն՝ <<Վ. Սարոյան մարդ և գրող>>; Ուսուցիչը կարդում է իր պատրաստած քարտերը;

## Կշռադատման փուլ

Քայլ 8 . Հնգյակի մեթոդով կատարել գրողի կյանքի և ստեղծագործության մասին ստացած տեղեկությունների համադրում;

1. Վիլյամ Սարոյան
2. Բարի, վիթխարի
3. Գրող, երազող, կարոտած
4. Ես հայ եմ, հայ
5. Օտարագիր

Քայլ 9. Ուսուցչի հրահանգը. <<Ով է Սարոյանը>>; Աշխատանքը կատարվում է հարց ու պատասխանով;

Քայլ 10.Հարցուպատասխանին հետևում է ասույթների ընթերցումը;

Քայլ 11. Մտքի քարտեզ

<< Իմ սիրտը լեռներում է>> ստեղծագործությունից կարդում ենք Ջոնիի խոսքերից. <<Ինչ-որ տեղ ինչ-որ բան սխալ է>>..

Ուսուցչի հարցը. <<Ինչն է սխալ>>..




Քայլ 12. Կատարել հասկացությունների խմբավորում Տաձև աղյուսակով

| Աստվածաշնչյան պատվիրաններ | Պատվիրաններից այն կողմ | Աղետ , հետևանքները |
|---|---|---|
| Մի՝ գողացիր<br>Մի՝ շնացիր<br>Մի՝ սպանիր<br>Հավատդ մի՝ ուրանա | Ատելություն , չարություն,գողություն, շնություն,սպանություն, ագահություն, հավատուրացություն | Գաղթ, օտար հողում բախտ որոնել,եղեռն, սպանություն,պատերազմ, սով, որբություն,հոգին կորցնել, լեզուն աղավաղել, լեզուն մոռանալ.ազգային արժեքները ոտնահարել |

Քայլ 13..Կատարել անդրադարձ

Ինչ, ով- Վ. Սարոյան գրող, հայ, սփյուռք, գաղթ, կտակ

Ինչպես- լսել ուսուցչի խոսքը, կարդալ կենսագրական տեղեկություններ, կատարել քարտային աշխատանքներ...

Ինչու- բարությունն ամենամեծ առաքինությունն է նախադասությունը գրողի օրինակով ընկալելու համար

Գնահատում; Գնահատումը կատարվում է ինքնագնահատման ռուբրիկներով;

| Գնահատման չափանիշներ | 0-3 միավոր | 4-6 միավոր | 7-9 միավոր | 10 միավոր |
|---|---|---|---|---|
| Աշխատանքի պատրաստում | Աշխատանքը կատարված է կոպիտ սխալներով, չի բնութագրում ներկայացված թեման , չի ներառում եզրակացություն | Աշխատանքը ուրվագծային բնութագրում է ներկայացված թեման, ներառում է ոչ հստակ եզրակացություն | Աշխատանքը բնութագրում է ներկայացված թեման, ներառում է եզրակացություն | Աշխատանքը անբողջովին բնութագրում էներկայացված թեման, ներառում է հստակ ներկայացված եզրակացություն |
| Աշխատանքի համար աղյուսակների պատրաստում | Աշխատանքի համար պատրաստված աղյուսակները չեն արտացոլում թեմայի հիմնական դրույթները | Աշխատանքի համար պատրաստված աղյուսակները գրեթե արտացոլում են թեմայի հիմնական դրույթները | Աշխատանքի համար պատրաստված աղյուսակներըարտացոլում են թեմայի հիմնական դրույթները | Աշխատանքի համար պատրաստված աղյուսակները ներառում են թեմային վերաբերող բոլոր անհրաժեշտ կետերը և արտացոլում են թեման ամբողջականությամբ |
| Կատարած աշխատանքի ներկայացման ունակություն | Աշակերտը չի կարողանում ներկայացնել թեման | Աշակերտը աշխատանքը ներկայացնում է թույլ տալով որոշակի սխալներ | Աշակերտը ներկայացնում է աշխատանքը | Աշխատանքը ներկայացնում է ամբողջությամբ՝ բերելով օրինակներ |

Տնային հանձնարարություն

1.Սովորել կենսագրությունը

2.Կարդալ <<Բարի հսկան>>

3. Գրել շարադրանք բանալի բառերով ՝ սիրտ, լեռ, կարոտ, ազատ, վեհ

# Հետազոտության արդյունքները

Ինչպես երևում է հետազոտության արդյունքներից դասի արդյունավետությունը տարեցտարի բարձրանում է ժամանակակից մեթոդներով ուսուցանելու պարագայում;Աշակերտների մոտ նկատեցի մեծ ներգրավվածություն, հետաքրքրություն, պատասխանատվություն և հիմնարար գիտելիքի առկայություն, սովորածը հիշելու և հիշողության մեջ երկարատև Պահպանելու մոտիվացիա; Ուստի կարելի է օգտագործել վերոնշյալ մեթոդները , քանի որ դրանք ապահովում են աշակերտների ներգրավվածությունը ուսումնական գործընթացին;

# Եզրակացություն

Ուսուցման ժամանակակից մեթոդները մեծացնում են աշակերտների մոտիվացիան քննարկված խնդիրները լուծելու համար, ինչը հուզական ազդակ է հաղորդում աշակերտների հետագա որոնման գործունեությանը, խրախուսում նրանց կատարել որոշակի գործողություններ; Ուսուցման ժամանակակից մեթոդները նպաստում են խմբային աշխատանքի ընդհանուր արդյունքին, ուսումնական գործընթացում ավելի բովանդակալից ու ննհետաքրքիր է դառնում; Ժամանակակից մեթոդները զարգացնում են այնպիսի գծեր, ինչպիսիք են տարբեր տեսակետներ լսելու կարողությունը, համագործակցելու, գործընկերային հարաբերությունների մեջ մտնելու ունակությունը, հակառակորդների նկատմամբ հանդուրժողականություն դրսևորելու , բարի կամք մասնակիցների նկատմամբ՝ փոխըմբռնման ուղիներ գտնելու գործընթացում , ճշմարտության որոնում; Այս գործընթացում ուսուցիչն ունի օգնականի գործառույթ. նրա գործունեության մեջ կենտրոնական տեղը զբաղեցնի ոչ թե անհատ , այլ աշակերտներիխումբը , որոնք խթանում են և ակտիվացնում են միմյանց;

# Օգտագործված գրականության ցանկ

## Համացանցային հղումներ


1. hy.m.wikipedia.org
2. https;// lib. Armedu.am
3. library. Fes.de
4. Սիսյան, Բաբայան , Աղուզումցյան – բարձրագույն դպրոցի մանկավարժություն, ուսումնական մեթոդական ձեռնարկ, Ե-2015

# Օրվա դասի պլան

Առարկա ՝ Հայոց լեզու

Դասարան ՝ 10-րդ

Ուսուցիչ ՝ Վ. Մելքոմյան

Դասի թեման Օ-ո ձայնավորների ուղղագրությունը

Դասի նպատակները ՝ խորացնել գիտելիքները օ-ո ձայնավորների ուղղագրության մասին

ամբողջացնել գիտելիքները օ-ո ձայնավորների ուղղախոսության շուրջ

պատկերացնում տալ այլ լեզուների ձայնավորների համակարգի մասին

զարգացնել խմբերով աշխատելու հմտություն

նպաստել գիտելիքը հիշելու և կիրառելու տեխնիկայի մշակմանը

Խնդիրները ՝ 1. գործնական աշխատանքների միջոցով բացատրել օ-ո ձայնավորների ուղղագրությունը

2. խմբային աշխատանքի միջոցով հարստացնել բառապաշարը

Վերջնարդյունքները՝ 1. կարողանա ճիշտ գրել և կարդալ սահմանված բառերը՝ 70 բառ

2. խմբավորի բառերը

3. ճիշտ կարդա օ-ո հնչյուն -տառերը

Միջառարկայական կապ անգլերեն, ռուսերեն, գրականություն , կերպարվեստ

Խաչվող հասկացություններ օրինաչափություն, կայունություն և փոփոխությունզարգացում, արժեհամակարգ

Դասի ընթացքը

Խթանման փուլ Քանի օր սովորողներն արդեն ունեն որոշակի գիտելիքներ , ուստի ուսուցիչը դասն սկսում է զրույցի մեթոդով; Աշակերտները գրատախտակին գրում ենo–n ձայնավորի ուղղագրությանը վերաբերող մի շարք բառեր; Այնուհետև ուսուցիչը կատարում է նախկինում ստացած գիտելիքներիխորացում;

Իմաստի ընկալում Բացատրում ենք ուղղագրությու նբառի իմաստները; Այնուհետև դասարանը բաժանվում են խմբերի և տրվում են քարտեր՝ զանազան առաջադրանքներով, որի ստուգումից հետո անցնում ենք լեզվական խաղին; Գրատախտակին գրում ենք օր բառը , և ասում , որ օր բառը մոլորվել է և պետք է գտնի ընկերներին; Աշակերտները գտնում են օր-ի հարազատներին և ստացվում է մտքի քարտեզ;

Կշռադատման փուլում կատարում ենք քարտային աշխատանք, որի ավարտից հետո ստուգվում են, շտկվում աշխատանքները , կատարում անդրադարձ;

Աշակերտները գնահատվում են և հանձնարարվում է տնային աշխատանք;

# Օրվա դասի պլան

Դասարանը՝ 7-րդ

Թեմա՝ Եղիշե Չարենցի կյանքը և գործնեությունը

Նպատակը՝ ձևավորի գիտելիքները հեղինակի կենսագրության և ապրած ժամանակաշրջանի մասին

Ծանոթանալ հեղինակի ստեղծագործություններին

Պատկերացում տալ ժամանակաշրջանի և միջավայրի մասին, որտեղ ապրել է հեղինակը

Ձևավորել հայրենասիրություն

Ծանոթացնել գրական ժանրերին

Խնդիրներ Տարբեր աշխատանքների միջոցով ուսումնասիրել ժամանակաշրջանը և միջավայրը որտեղ ապրել և ստեղծագործել է հեղինակը

Կատարել նոր և անծանոթ բառերի դուրս գրում և քննարկում

Վերջնարդյունք վերարտադրի գրողի կենսագրությունը

Ներկայացնի ապրած ժամանակաշրջանը

Արժևորի հայ գրականության դերը այլ ազգերի գրականությունների շարքում, ինչպես նաև հայ ժողովրդի պահպանման գործում

Կդասակարգի ժանրերը

Միջառարկայական կապ աշխարհագրություն, պատմություն , երաժշտություն

Խաչվող հասկացություններ օրինաչափություն,կառուցվածք և գործառույթ, ,ժամանակ և տարածություն, անհատական և մշակութային արժեհամակարգ

Դասի ընթացքը Երաժշտության ներքո բաժանվում են քարտեր և հանձնարարվում են գրել Չարենցի բանաստեղծությունների անունները և իրենց ծանոթ ժանրերի անունները;

Իմաստի ընկալման փուլում սահիկահանդեսի միջոցով ծանոթանում ենք Չարենցի կյանքին և գործնեությանը;Կազմել քարտեզ այն երկրների, որտեղ այցելել է Չարենցը; Ունկնդրում ենք Չարենցի բանաստեղծությունների բառերով գրված երգը;

Կշռադատման փուլում խաղ– վիկտորինայի կանոններով հնչում է հարցը , իսկ աշակերտները փորձում են տալ պատասխաններ;Դասն ամփոփում ենք քառաբաժան մեթոդով;Գնահատելուց, անդրադարձ կատարելուց հետո տրվում է տնային առաջադրանքը;